ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 37-Ն

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Բերդի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրենի և Բերդի քաղաքապետի միջև 09.11.2015թ. կնքված <<ՀՀ Տավուշի մարզում փորձարկվող վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացում>> թիվ 1 պայմանագիրը, Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրենի և Բերդի քաղաքապետի միջև 09.11.2015թ. կնքված <<Բարեգործական նվիրաբերության>>թիվ 31 պայմանագիրը, պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին 16.12.2015թ. կնքված համաձայնագիրը, և 16.12.2015թ. կնքված <<Բարեգործական նվիրաբերության>> պայմանագիրը, ՀՀ Տավուշի մարզպետի և Բերդի քաղաքապետի միջև 02.12.2015թ. կնքված <<Կապիտալ սուբվենցիայի հատկացման>>թիվ 12 պայմանագիրը

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Համայնքի 2015թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1)համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 13842.2 հազար դրամի չափով և սահմանել
ա)բյուջեի եկամտային մասը՝ 246565.85 հազար դրամ,
բ)բյուջեի ծախսային մասը՝ 246565.85 հազար դրամ:
2)բյուջեի եկամտային մասում՝ <<Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ դրամաշնորհ>> տողն ավելացնել 1383.0 հազար դրամի չափով, նվիրատվություն տողն ավելացնել 10700.5 հազար դրամի չափով և վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացում տողն ավելացնել 1758.7 հազար դրամի չափով՝ համաձայն N1հավելվածի:
3)բյուջեի ծախսային մասում՝ <<Մշակույթ և սպորտ>> տողն ավելացնել 8000.0 հազար դրամի չափով, <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն>> տողն ավելացնել 4083.5 հազար դրամի չափով, և<<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> տողն ավելացնել 1758.7 հազար դրամի չափով՝ համաձայն N 2 հավելվածի:

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 1
Բերդ քաղաքային համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 37-Ն որոշման

## 2015 թվականի համար սահմանված համայնքի եկամտատեսակները

| Հ/հ | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | 2015թ.Տարեկան պլան /հազ.դրամ/ |
|---|---|---|
| | ՄԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 5500.00 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 17500.00 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3500.00 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3200.00 |
| 5 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 2200.00 |
| 6 | ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ | 7500.00 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 11000.00 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 6000.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 56400.00 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 131396.20 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5342.90 |
| 11 | ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ | 4534.50 |
| 12 | Ընթացիկ սուբվենցիա/աշխ.տարբ/ | 27318.70 |
| 13 | Դրամաշնորհ | 1713.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 170305.30 |
| 14 | Նվիրատվություն /ՀՕՖ/ | 13600.50 |
| 15 | Վարձատրվող հասարակական աշխատանքներ | 1758.70 |
| 16 | ՏԱՐԵՍԿԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | 4501.35 |
| 17 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 4020.23 |
| 18 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 481.12 |
| | ԱՄԲՈՂՋԸ | 246565.85 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 2
Բերդ քաղաքային համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 37-Ն որոշման

Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 2015թ.

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | Նախատեսված գումարը /հազ.դրամ/ |
|---|---|---|
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ | 65018.6 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 42440.0 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ | 31222.7 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ | 22408.1 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ , ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 57830.0 |
| 6 | ՍՈՑ ԾԱԽՍԵՐ | 500.0 |
| 7 | ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | 3300.0 |
| 8 | ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ | 700.0 |
| 9 | ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | 4761.35 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5342.9 |
| 11 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 5883.5 |
| 12 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 3500.0 |
| 13 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 1900.0 |
| 14 | ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | 1758.7 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 246565.85 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 38-Ն

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, ՀՀ օրենքի 7,9,10,11-րդ հոդվածներով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ ենթակետով և հաշվի առնելով, որ համայնքը սահմանամերձ է և ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Բերդ համայնքի 2016 թվականի

1.1. Տեղական տուրքերի դրույքաչափերը համաձայն N 1 հավելվածի
1.2. Տեղական վճարների դրույքաչափերը համաձայն N 2 հավելվածի:

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

*Հավելված 1*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*

*2015թ. դեկտեմբերի 25-ի N 38-Ն որոշման*

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15 000 դրամ,

բ) սույն կետի ,,ա,, ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ,,ա,, ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերի՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 15 000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 6000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

5[1]. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50 000 դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառ. մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

դ/ համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

8.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:

9.Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

10.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 250 000 դրամ:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ*

*Հավելված 2*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*

*2015թ. դեկտեմբերի 25-ի N 38-Ն որոշման*

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար,ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 80000 դրամի չափով:

2.Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և նման այլ աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 2000 դրամի չափով:

3.Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել վճար յուրաքանչյուր մասնակցից 20000 դրամի չափով:

4.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար՝

1) կենցաղային աղբի համար ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 120 դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝3000 դրամ:

5.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար՝600 դրամ:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 39-Ա

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ մասով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդ համայնքի սեփականության 2015թվականի գույքագրման արդյունքները և դուրս գրման ենթակա գույքի ցուցակը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

*Հավելված*
*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*
*2015թ. դեկտեմբերի 25-ի N 39-Ա որոշման*

## ՑՈՒՑԱԿ

### Բերդ համայնքի սեփականությունից դուրս գրման ենթակա գույքի

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Արժեքը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| | **Բերդի քաղաքապետարան** | | | | |
| 1 | դիմասեղան | հատ | 2 | 6464 | 12928 |
| | **Ընդամենը** | | | | **12928** |
| | **<<Բերդ քաղաքի թիվ 2 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի** | | | | |
| 1 | Ակարդեոն | հատ | 2 | 103 | 206 |
| 2 | Թխվածքի պահարան | հատ | 1 | 10395 | 10395 |
| 3 | Սառնարան | հատ | 1 | 19250 | 19250 |
| 4 | Նկարներ | հատ | 10 | 24260 | 242600 |
| 5 | *Նկարներ հեքիաթային* | *հատ* | *19* | *1887* | *35853* |
| 6 | Էլեկտրո սալիկ 2 տեղ | հատ | 2 | 30000 | 60000 |
| 7 | Խալաթ | հատ | 36 | անարժեք | 0 |
| 8 | Ուղեգորգ 2 կտոր | քմ | 15.65 | 27 | 422.55 |
| | **Ընդամենը** | | | | **368726.55** |
| | **<<Բերդ քաղաքի թիվ 3 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի** | | | | |
| 1 | Գորգ | հատ | 4 | 323 | 1292 |
| 2 | Գորգի լոսկուտ | քմ | 1.4 | 315 | 441 |
| 3 | Աթոռ մանկական | հատ | 5 | 4300 | 21500 |
| 4 | Աթոռ մանկական | հատ | 10 | 4500 | 45000 |
| 5 | Աթոռ մանկական | հատ | 1 | 7000 | 7000 |
| | **Ընդամենը** | | | | **75233** |
| | **<<Բերդ քաղաքի Երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ** | | | | |
| 1 | Գրասեղան 1 տումբանի | հատ | 1 | 1455 | 1455 |
| 2 | Աթոռ թատերական | հատ | 10 | 7449.2 | 74492 |
| 3 | Տումբա | հատ | 1 | 1818 | 1818 |
| | **Ընդամենը** | | | | **77765** |
| | **Արվեստի դպրոց** | | | | |
| 1 | Գրասեղան 2 տումբանի | հատ | 1 | 3506 | 3506 |
| 2 | Աշակերտական նստարան | հատ | 4 | 2656 | 10624 |
| 3 | Գրապահարան 2 դռնանի | հատ | 1 | 27943 | 27943 |
| 4 | Սեղան 1 տումբանի | հատ | 1 | 1461 | 1461 |
| 5 | Գրապահարան պատի | հատ | 6 | 58.2 | 349.2 |
| 6 | Սեղան | հատ | 1 | 5932 | 5932 |
| 7 | Սեղան | հատ | 1 | 80.85 | 80.85 |
| 8 | Շերտավարագույր | հատ | 27 | 5000 | 135000 |
| | **Ընդամենը** | | | | **184896.05** |
| | **<<Բերդ քաղաքի ջրամատակարարման և բարեկարգման>> ՓԲԸ** | | | | |
| 1 | Բազկաթոռ | հատ | 1 | 3000 | 3000 |
| 2 | UPS/անխափան սնուցման սարք | հատ | 1 | 18000 | 18000 |
| 3 | Համակարգիչ | հատ | 1 | 199000 | 199000 |
| 4 | Մոնիտոր | հատ | 1 | 55500 | 55500 |
| | **Ընդամենը** | | | | **275500** |
| | **Բերդի քաղաքային գրադարան** | | | | |
| 1 | Դյուրակիր համակարգիչ Fujits Lifebook AH 531 | հատ | 2 | 229900.8 | 459801.6 |
| 2 | Աթոռ փափուկ, սև | հատ | 4 | անարժեք | 0 |
| | **Ընդամենը** | | | | **459801.6** |
| *Ամբողջը* | | | | | **1454850.2** |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 40-Ա

## ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետությանօրենքի 16-րդ հոդվածի 26-րդմասով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016 թվականի համար՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

*Հավելված*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*

*2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 40-Ա որոշման*

## Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 24

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Հավելավճար | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 450,000.00 | | 450,000.00 |
| | Հայեցողական պաշտոններ | | | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 180,000.00 | | 180,000.00 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 165,000.00 | | 165,000.00 |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 165,000.00 | | 165,000.00 |
| 5 | Համայնքի ղեկավարի ռեֆերենտ | 1 | 180,000.00 | | 180,000.00 |
| | Համայնքային ծառայողներ | | | | |
| 6 | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 200,000.00 | | 200,000.00 |
| | Ֆինանսատնտեսագիտական բաժին | | | | |
| 7 | Բաժնի պետ 2.1-2 | 1 | 180,000.00 | | 180,000.00 |
| 8 | Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 125,000.00 | | 125,000.00 |
| 9 | Առաջին կարգի մասնագետ 3.2-9 | 1 | 80,000.00 | | 80,000.00 |
| 10 | Առաջին կարգի մասնագետ 3.2-1 | 1 | 80,000.00 | | 80,000.00 |
| 11 | Առաջին կարգի մասնագետ 3.2-7 | 1 | 80,000.00 | | 80,000.00 |
| | Ներքին աուդիտի բաժին | | | | |
| 12 | Բաժնի պետ 2.1-3 | 1 | 180,000.00 | | 180,000.00 |
| | ՔԿԱԳ Բերդի ՏԲ | | | | |
| 13 | Բաժնի պետ 1.3-1 | 1 | 256,624.00 | | 256,624.00 |
| 14 | Առաջին կարգի մասնագետ 3.2-10 | 1 | 133,603.00 | | 133,603.00 |
| | Աշխատակազմ | | | | |
| 15 | Գլխավոր մասնագետ 2.3-2 | 1 | 165,000.00 | | 165,000.00 |
| 16 | Գլխավոր մասնագետ 2.3-3 | 1 | 165,000.00 | | 165,000.00 |
| 17 | Առաջատար մասնագետ 3.1-7 | 1 | 125,000.00 | | 125,000.00 |
| 18 | Առաջատար մասնագետ 3.1-6 | 1 | 125,000.00 | | 125,000.00 |
| 19 | Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 125,000.00 | | 125,000.00 |
| 20 | Առաջին կարգի մասնագետ 3.2-3 | 1 | 80,000.00 | | 80,000.00 |
| | Տեխսպասարկման անձնակազմ | | | | |
| 21 | Վարորդ | 1 | 140,000.00 | | 140,000.00 |
| 22 | Հավաքարար | 2 | 72,751.00 | | 145,502.00 |
| 23 | Հանդապահ | 1 | 72,751.00 | | 72,751.00 |
| | Ընդամենը | 24 | 3,525,729 | - | 3,598,480 |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 41-Ա

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդ համայնքի մարզադպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016թվականի համար՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

*Հավելված*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*

*2015 թվականի դեկտեմբերի 25-ի N41 -Ա որոշման*

## Բերդի մանկապատանեկան մարզադպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների 11

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Հավելավճար | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Տնօրեն | 1 | 100,000.00 | | 100,000.00 |
| 2 | Մարզիչ | 1 | 72,751.00 | 5,152.00 | 77,903.00 |
| 3 | Մարզիչ | 1 | 72,751.00 | 5,152.00 | 77,903.00 |
| 4 | Մարզիչ | 1 | 72,751.00 | | 72,751.00 |
| 5 | Մարզիչ | 0.5 | 72,751.00 | | 36,375.50 |
| 6 | Մարզիչ | 1 | 72,751.00 | 5,152.00 | 77,903.00 |
| 7 | Մարզիչ | 0.5 | 72,751.00 | | 36,375.50 |
| 8 | Մարզիչ | 0.5 | 72,751.00 | | 36,375.50 |
| 9 | Բուժքույր | 0.5 | 72,751.00 | 2,576.00 | 38,951.50 |
| 10 | Տնտեսվար | 1 | 72,751.00 | | 72,751.00 |
| 11 | Տեխնիկական աշխատող | 1.5 | 72,751.00 | | 109,126.50 |
| | Ընդամենը | 9.50 | 827,510.00 | 18,032.00 | 736,415.50 |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 42-Ա

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդ համայնքի քաղաքային գրադարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016 թվականի համար՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

*Հավելված*

*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*

*2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 42-Ա որոշման*

Բերդի քաղաքային գրադարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 2

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Հավելավճար | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Տնօրեն | 1 | 100000 | | 100000 |
| 2 | Գրադարանավարուհի | 1 | 72751 | 5152 | 77903 |
| | Ընդամենը | 2 | 172751 | | 177903 |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 43-Ա

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդ համայնքի արվեստի դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016 թվականի համար՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

*Հավելված*
*Բերդ քաղաքային համայնքի ավագանու*
*2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 43-Ա որոշման*

## Բերդի արվեստի դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 7

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Հավելավճար | Ամսական աշխատավարձ /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Տնօրեն | 1 | 100000 | | 100000 |
| 2 | Նկարչության դասատու | 4 | 72751 | 20608 | 311612 |
| 3 | Գորգագործության դասատու | 1 | 72751 | | 72751 |
| 4 | Տեխն.աշխատող | 1 | 72751 | | 72751 |
| Ընդամենը | | 7 | 318253 | 20608 | 557114 |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 44-Ն

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետով և 54-րդ հոդվածի 2-րդ մասով

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել համայնքի 2016 թվականի բյուջեն.

1) եկամուտների գծով՝ 205612.20 հազար դրամ,
2) ծախսերի գծով՝ 205612.20 հազար դրամ:

2.Հաստատել համայնքի տեղական բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների համաձայն N 1 հավելվածի:
3.Հաստատել համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման համաձայն N 2 հավելվածի:
4.Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:
5.,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
1) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
2) սահմանել, որ փոփոխություններիհանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 տոկոսը:

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 1
Բերդ համայնքի
ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 25 -ի N 44-Ն որոշման

## 2016 թվականի համար սահմանված համայնքի եկամտատեսակները

| Հ/հ | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | 2016թ.Տարեկան պլան /հազ.դրամ/ |
|---|---|---|
| | ՄԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 5000.00 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 18000.00 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 5000.00 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 2700.00 |
| 5 | Այլ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 1800.00 |
| 6 | ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ | 7500.00 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 11000.00 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 6000.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 57000.00 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 138734.80 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5342.90 |
| 11 | ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ | 4534.50 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 148612.20 |
| 12 | ՏԱՐԵՍԿԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | 0.00 |
| 13 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 0.00 |
| 14 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 0.00 |
| | ԱՄԲՈՂՋԸ | 205612.20 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 2
Բերդ համայնքի
ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 25 -ի N 44-Ն որոշման

**Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 2016թ.**

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | Նախատեսված գումարը /հազ.դրամ/ | 2016թ. |
|---|---|---|---|
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ | 55807.0 | 55807.0 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 43773.0 | 43773.0 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ | 21535.0 | 21535.0 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ | 21850.0 | 21850.0 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ , ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 44004.3 | 44004.3 |
| 6 | ՍՈՑ ԾԱԽՍԵՐ | 1000.0 | 1000.0 |
| 7 | ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | 0.0 | 0.0 |
| 8 | ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ | 4960.0 | 4960.0 |
| 9 | ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | 0.00 | 0.0 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5342.9 | 5342.9 |
| 11 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 2000.0 | 2000.0 |
| 12 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 3500.0 | 3500.0 |
| 13 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 1840.0 | 1840.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 205612.20 | 205612.20 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 45-Ա

## ՍԵՐԳԵՅ ՍՈՒՐԵՆԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Բերդ համայնքի բնակիչ Սերգեյ Սուրենի Ներսիսյանը դիմել է կառուցապատման իրավունքով իրեն տրամադրված հասարակական նշանակության հողամասի կառուցապատման իրավունքն օտարելու խնդրանքով:

Բերդ համայնքի ավագանու 04 հոկտեմբերի 2007թ. N28 որոշման և Բերդի քաղաքապետի 2008թ. հունվարի 9-ի որոշման համաձայն Բերդ քաղաքի բնակիչ Սերգեյ Սուրենի Ներսիսյանին Բերդ քաղաքի Լևոն Բեկի 8ա հասցեում, 50 տարի ժամկետով , կառուցապատման իրավունքով տրամադրվել է 700 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս, կադաստրային համարը՝ 11-002-123-004, տարեկան 36000 դրամ վարձավճարով: 2008թ. փետրվարի 4-ին Ներսիսյանի հետ կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր:30.07.2008թ. շինարարության ավարտման փաստագրման ակտի հիման վրա Ներսիսյանի կողմից հողամասի վրա իրականացված շինությունը ստացել է պետական գրանցում՝որպես հասարակական նշանակության սրճարան:Պայմանագրի 4.3.5. կետի համաձայն Ներսիսյանն իրավունք ունի տնօրինելու կառուցապատման իրավունքը՝փոխանցելու այլ անձի, ազատորեն օտարելու, գրավ դնելու այն, ինչպես նաև կատարելու այլ գործարքներ՝կառուցապատման իրավունքի նկատմամբ:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետովև հաշվի առնելով վերոնշյալ պայմանագրի 4.3.5. կետի պայմանները

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Թույլատրել Սերգեյ Սուրենի Ներսիսյանին Բերդ քաղաքի Լևոն Բեկի 8ա հասցեում 50 տարի ժամկետով 36000 դրամ տարեկան վարձավճարով կառուցապատման իրավունքով իրեն տրամադրված 700քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի, կադաստրային համարը՝ 11-002-123-004, կառուցապատման իրավունքն օտարել այլ անձի:

**Համայնքի ղեկավար՝** ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 46-Ա

## ԲԵՐԴ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015 թվականի ԹԻՎ 32-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ կետերով, հաշվի առնելով, որ <<Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը Տավուշի սոցիալական ապահովության տարածքային բաժնի աշխատանքներն իրականացնելու համար նախկինում տրամադրված 6 սենյակների փոխարեն օգտագործում է 4-ը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Բերդ համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետությանը վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին>> N 32-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ ու լրացումներ և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1.Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Լևոն Բեկի 5 հասցեում գտնվող վարչական շենքից 70քմ ընդհանուր մակերեսով ոչ բնակելի տարածք՝ 3-րդ հարկի թիվ 9 սենյակը 19.04 քմ մակերեսով, 19.04 քմ մակերեսով թիվ 10 սենյակից՝ 12.62 քմ մակերեսով-մաս, թիվ 17 և18 սենյակները յուրաքանչյուրը՝ 19.17քմ մակերեսով, 5 տարի ժամկետով, մինչև 2020 թվականի օգոստոսի 18-ը, տարեկան 840 000 ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել Հայաստանի Հանրապետությանը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <<Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի Տավուշի սոցիալական ապահովության տարածքային բաժնի աշխատանքներն իրականացնելու համար:

2.Որոշումը լրացնել 2-րդ կետով՝հետևյալ բովանդակությամբ. <<Վարձավճարը հաշվարկել 2015 թվականի օգոստոսի 18-ից՝ վերոնշյալ 4 սենյակների համար>>:

3.Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր:

**Համայնքի ղեկավար՝** ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 47-Ա

## ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԵՐԴ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 10.02.2011թվականի ,,Գնումների գործընթացի կազմակերպման մասին,, որոշմամբ և հաշվի առնելով, որ Բերդ քաղաքային համայնքին ուժեղ քամիների պատճառած վնասների հետևանքները վերացնելու համար ՀՀ կառավարության 19.11.2015թվականի N1361 -Ն որոշմամբ հատկացվել է 1383.0 հազար դրամ սուբվենցիա

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. 1383.0 հազար դրամ սուբվենցիան օգտագործել համայնքի Խորենացի 27Բ , Խորենացի 27Ա, Խորենացի 71, Մաշտոցի 84ա, Մաշտոցի 84 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման նպատակով:
2.Վերանորոգման աշխատանքների գնման գործընթացը կազմակերպել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու:

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ